

## ԿՈՐԴՈՐԱՏԻՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉՆԱԿՆԱՆ ԶԱՐԳԻ ՇՈՒՂ

Ա. Ֆ. ՄՈՍԻԿՅԱՆ

Բազմաթիվ ուսումնասիրություններ և հետազոտություններ փաստում են, որ մտավոր սեփականության գնահատման և հաշվառման գործընթացները բավականին ետ են մնում համաշխարհային տնտեսության մեջ կատարվող հիմնարար և կառուցվածքային փոփոխությունների զարգացման մակարդակից: Մասնագետների մեծ մասը կարծում է, որ ներկայումս գիտատար տնտեսություններում մտավոր սեփականության օբյեկտների (այսուհետ՝ ՄՄՕ) և ոչ նյութական այլ ակտիվների (այսուհետ՝ ՈՆԱ) դերը առաջնային է արտադրության մնացած գործոնների նկատմամբ, և, հետևաբար, ֆինանսական և հաշվապահական հաշվառման ստանդարտները պետք է հնարավոր դարձնեն վերջիններիս առավել հստակ ներկայացումը կազմակերպությունների հաշվեկշիռներում, ինչը տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն կտա կայացնել արդյունավետ կառավարչական որոշումներ, իսկ ՄՄՕ-ների գնահատմամբ զբաղվող մասնագետները կստանան հնարավորինս ճշգրիտ տեղեկություններ մտավոր սեփականության ճանաչման, գնահատման և հաշվառման համար:

Այս տեսակետի հակառակորդները իրավացիորեն նշում են, որ դեռևս միջազգային տնտեսական պրակտիկայում գոյություն չունի գնահատման համապարփակ և ընդունելի մեթոդ, իսկ մտավոր սեփականության օբյեկտների և ոչ նյութական այլ ակտիվների գնահատման և հաշվառման ստանդարտների «մեղմացումը» կբարդացնի առանց այն էլ խըրթին իրավիճակը և տեղիք կտա ընկերությունների ակտիվների անհարկի արժեքային այլաձևումների, քանզի յուրաքանչյուր առանձին գնահատող միևնույն ՈՆԱ-ն կամ ՄՄՕ-ն գնահատելիս կարող է տարբեր արժեքային մեծություններ ստանալ: Օրինակ, չճանաչված ՈՆԱ-ների կամ գուղվիլի գնահատման բարդության մասին Մուրը գրում է. «Ի՞նչ է գուղվիլի գնահատումը. ոչ ավելի, քան այն հավանականության գնահատում, որ նախկին հաճախորդները կրկին կդիմեն իրենց նախկին ընկերություններին»<sup>1</sup>:

Մտավոր սեփականության օբյեկտների և ոչ նյութական այլ ակտիվների գնահատման ու հաշվառման հիմնահարցերը ունեն մեկդարյա պատմություն: Առաջին անգամ դրանց անդրադարձել են հայտնի տնտեսագետներ Լոուրենս Դիկսիսը<sup>2</sup> և Լիկը<sup>3</sup>:

Դեռևս 2000 թ. Մեծ Բրիտանիայում Բոսվորթի<sup>4</sup> կատարած համապարփակ վերլուծությունից պարզվել է, որ բրիտանական կորպորացիաների մեծ մասը՝ 78 %-ը, ընդհանրապես չի իրականացնում մտավոր սեփականության օբյեկտների կամ ոչ նյութական այլ ակտիվների գնահատում ու հաշվառում, իսկ ԱՄՆ «Fortune 500» ընկերություններից 226-ի հաշվեկշիռներում արտացոլված չէ մտավոր սեփականության ոչ մի օբյեկտ:

ՌԴ-ում իրականացված նույնատիպ հետազոտությունը ցույց է տվել, որ ընկերությունների հաշվեկշիռներում արտացոլված մտավոր սեփականության և ոչ նյութական ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվների մեջ չի գերազանցում 1 %-ը<sup>5</sup>:

<sup>1</sup> F. S. Moore. Legal protection of goodwill, The Ronald Press Company, New York, 1936.

<sup>2</sup> Տե՛ս L. R. Dicksee, Goodwill and its treatment in Accounts, IP Willey and Sons Publishers, London, 1986:

<sup>3</sup> Տե՛ս A. Lick, Goodwill and its valuation, McGraw&Hill, London, 1914:

<sup>4</sup> Տե՛ս D. L. Boswarth, The Importance of Trade Marks to Capital Raising and Financial Performance Lessons for SMEs, London, 2003:

<sup>5</sup> Տե՛ս А. Костин, Богатство видимое и невидимое, "Городской Курьер", 11.06.1998, № 53:

«Enron» ընկերության ֆինանսական անախորժությունները (մոտ 60 մլրդ ԱՄՆ դոլարի հասնող կապիտալի արժեզրկումը) իրականում բավականին հստակեցնում է ՈՆԱ-ների ճիշտ գնահատման՝ որոշ տնտեսագետների մտավախությունները: Այս վերագային կորպորացիան, իր նյութական ակտիվների գերակշիռ մասը վաճառելով, հաշվեկշիռը կառուցել էր գերազանցապես ոչ նյութական ակտիվներով՝ դրանք անվանելով «էներգետիկ շուկաների գնահատման համապարփակ մոդելներ»: Սակայն առաջացած աուդիտորական աղմուկը, ընկերության բաժնետոմսերի կտրուկ անկումը ֆոնդային շուկայում անմիջապես այդ ակտիվները հավասարեցրին զրոյի՝ ընկերությանը կանգնեցնելով սնանկացման շեմին<sup>6</sup>: Նույն բախտին արժանացավ աշխարհահռչակ «Artur Andersen» աուդիտորական ընկերությունը, որը, իրականացնելով «Enron»-ի աուդիտը, հաստատել էր գերազանցատված մտավոր սեփականության օբյեկտների և ոչ նյութական այլ ակտիվների արժեքային մեծությունների իսկությունը<sup>7</sup>:

«Brookings Institution» ընկերության հետազոտության համաձայն՝ 1978 թ. ԱՄՆ ֆոնդային շուկայում գնանշվող ընկերությունների նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում էր ընդհանուր կապիտալացման 83 %-ը, իսկ 2003 թվականին այդ ցուցանիշը տատանվում էր 35-40 %-ի սահմաններում:

Հատ Դ. Դելոնգի<sup>8</sup> շատ ՄՄՕ-ներ նույնիսկ չպետք է արտացոլվեն ընկերությունների հաշվապահական հաշվեկշիռներում, քանզի դրանք ոչ այլ ինչ են, քան գուղվի: Նա կարծում է, որ «Brookings Institution»-ի իրականացրած հետազոտությունը հստակ պատկերացում է ի տալիս, թե այդ փոփոխության որ մասն է կազմում ՈՆԱ-ների արժեքային աճը, իսկ որը՝ արժեթղթերի գերազանցատումը:

Ընդունելով այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության և ոչ նյութական այլ ակտիվների գնահատման ու հաշվառման հիմնախնդիրները էապես չեն տարբերվում համաշխարհային տնտեսության այլ երկրների նույն ոլորտում առկա հիմնահարցերից, մենք փորձել ենք ուսումնասիրել ՀՀ բաժնետիրական ընկերություններում ՄՄՕ-ների և այլ ՈՆԱ-ների ճանաչման, գնահատման և հաշվառման գործառնությունները, բացահայտել դրանց թերությունները և մշակել այնպիսի մոտեցումներ, որոնք հնարավորինս կհստակեցնեն վերոհիշյալ գործառնությունները և կբարձրացնեն արդյունավետությունը:

Ուսումնասիրության համար Հայաստանի ֆոնդային բորսայում գնանշվող երկու հարյուրից ավելի ընկերություններից ընտրել ենք 2002-2004 թթ. ընթացքում առավել ակտիվ բորսայական շրջանառություն ունեցող 80 ընկերություններից 40-ը:

Ընտրության չափանիշները հետևյալն են.

• ֆոնդային բորսայում ընկերության բաժնետոմսերի շրջանառության տարեկան ծավալը,

- արտադրության «համեմատական» գիտատարության մակարդակը<sup>9</sup>,
- ճանաչված ֆիրմային և ապրանքային նշանների առկայությունը,
- արտադրության հիմնական ուղղվածությունը,
- ընկերության ֆինանսական վիճակը:


<sup>6</sup> Տե՛ս A. Murray, Alan Murray worries about accounting for Intellectual Property and Intangible Assets, [www.mercercapital.com/businessvaluation/IntellectualProperty/AMurray.html](http://www.mercercapital.com/businessvaluation/IntellectualProperty/AMurray.html), June 10, 2002:

<sup>7</sup> Տե՛ս P. Gosling, IP Matters, Accounting for Intellectual Property, McGraw&Hill, 2002, էջ 1-23:

<sup>8</sup> Տե՛ս D. DeLong, Did Enron exists?, [http://campenron.blogspot.com/2002\\_02\\_01\\_Campenron\\_archive.html#75013493](http://campenron.blogspot.com/2002_02_01_Campenron_archive.html#75013493), July 22, 2002

<sup>9</sup> «Համեմատական» գիտատարության մակարդակ» ցուցանիշը ֆոնդային բորսայում գնանշվող ընկերությունների ընտրության ժամանակ հաշվարկվել է մոտավորությամբ, քանզի արտադրության գիտատարության ցուցանիշը ուսումնասիրվող ընկերությունների համար հստակ հաշվարկել հնարավոր չի եղել համապատասխան տեղեկատվության պակասի պատճառով: Ընդհանուր առմամբ գիտատարություն ասելով նկատի ենք ունեցել վերջնական ապրանքների և ծառայությունների մեջ գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական և այլ տեխնոլոգիական աշխատանքների վրա կատարված ծախսերի տեսակարար կշիռը, որի վերագրումը արտադրության ծախսերին թույլատրվում է «Հետազոտության և զարգացման ծախսեր» ՀՀ հաշվապահական հաշվառման 9-րդ ստանդարտի համաձայն:

**ՀՀԲ-ում գնանշվող առավել ակտիվ և համեմատաբար գիտատար 40 ընկերությունների ընդհանուր և ոչ նյութական ակտիվները (ՈՆԱ) ըստ 2000-2003 թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների (հզ. դրամ)**



Ուսումնասիրությունից պարզվեց, որ ՀՀ բաժնետիրական ընկերությունների կորպորատիվ կառավարման համակարգում մտավոր սեփականության և ոչ նյութական այլ ակտիվների ճանաչման, գնահատման և հաշվառման հիմնահարցերը բավականին խճճված են և անուշադրության մատնված:

Հաճախ միևնույն գումարային մեծությունը, որը փորձ է արվել ինչ-որ կերպ վերագրել ընկերության ոչ նյութական ակտիվներին, եռամսյակային հաշվետվություններում բազմիցս «չլուծ է» ոչ նյութական ակտիվների մեկ ենթահոդվածից մյուսը:

Նշանակում է, որ ընկերություններում ոչ նյութական ակտիվների կառավարման համակարգը դեռևս ներդրված չէ, որը իր հերթին խոչընդոտում է վերջիններիս ճանաչման գործընթացների հստակ իրականացմանը՝ չհաշված դրանց գնահատման և հաշվառման հարցերը: Օրինակ, 12 եռամսյակ անընդհատ վնասով աշխատող ՀՀ խոշոր ընկերություններից մեկի գույքվիշը նվազելու փոխարեն միշտ մնացել է անփոփոխ և կազմել ընդհանուր ակտիվների 80 %-ը\*\*:

Կատարյալ արդյունավետ շուկայում ընկերության ակտիվների հանրագումարը պետք է հավասարվի վերջինիս շուկայական կապիտալացմանը, սակայն Հայաստանի ֆոնդային շուկան այդպիսին չէ. այդպիսի համահավասարություն չի նկատվում անգամ Մեծ յոթնյակի երկրների ֆոնդային շուկաներում և նույնիսկ աշխարհի ամենաարդյունավետ՝ Նյու Յորքի ֆոնդային շուկայում\*\*\*:

Մեր համոզմամբ դեռևս լուծված չէ ներստեղծված ոչ նյութական ակտիվների գնահատման և հաշվառման հիմնախնդիրը, որն իր հերթին առաջացնում է հետևյալ հարցերը.

- ո՞ր ոչ նյութական ակտիվները պետք է ներկայացվեն ստանդարտների կողմից,


- ի՞նչ տեղեկություն պետք է ներկայացվի ոչ նյութական ակտիվների վերաբերյալ (ՈՆԱ-ների խմբային դասակարգում և դրանց հատկանիշների սահմանում, ՈՆԱ-ների ստեղծման համար անհրաժեշտ ծախսերի դասակարգում, այդ ակտիվների արժեքի սահմանում, ՈՆԱ-ներից ստացվող ապագա օգուտների վրա էական ազդեցություն ունեցող դեպքերի դասակարգում),

\* Գրաֆիկում ներկայացված 2000-2003 թթ. տվյալները վերոհիշյալ 40 ընկերությունների համապատասխան ցուցանիշների գումարային մեծություններն են: Աղբյուրը՝ Հայաստանի ֆոնդային բորսա, լիստինգային բաժնի հիմնապաշար, 2004 թ. մարտ-ապրիլ:

\*\* Այսպիսի իրավիճակում ՀՀՀՀՍ 38-ը պահանջում է իրականացնել ոչ նյութական ակտիվների վերագնահատում, երբ կան հիմնավոր պատճառներ վերջիններիս արժեքային մեծությունների փոփոխության վերաբերյալ:

\*\*\* Շուկայական կապիտալացումը հավասար է ֆոնդային շուկայում ընկերության շրջանառող բաժնետոմսերի քանակի և դրանց շուկայական գնի կշռված միջին արտադրյալին:

ՀՀ ֆոնդային բորսայում գնանշվող բաժնետիրական ընկերությունների շուկայական կապիտալացումը, ընդհանուր և ոչ նյութական ակտիվները ըստ հաշվեկշիռների, 2004 թ.\*



• ինչպե՞ս պետք է հաշվարկվեն ՈՆԱ-ների ստեղծման համար անհրաժեշտ ծախսերի և ապագա արդյունքների միջև առկա ժամանակային ճեղքի և կոռելյացիայի (կապի) մեծությունները,

• ՈՆԱ-ի հետ կապված բացահայտումները պետք է լինեն կամավո՞ր, թե՞ պարտադիր,

• այդ բացահայտումները պետք է կատարվեն յուրաքանչյուր տարի՞, թե՞ ավելի հաճախ:

Մեր կարծիքով, ֆոնդային բորսայում գնանշվող ընկերությունները պետք է հանրությանը ներկայացնեն առանձին ոչ նյութական ակտիվների կառավարման հաշվետվություններ, որոնք պետք է կազմված լինեն երկու բաղկացուցիչ մասերից՝ քանակական և որակական: Քանակական մասը պետք է պարունակի հետևյալ կետերը.

• չճանաչված ՈՆԱ-ների գնահատում և հաշվառում ըստ միջազգային ստանդարտների, որը պետք է արտացոլի նոր ստեղծված ՈՆԱ-ների արժեքը, ամորտիզացիան և դուրսգրումները,

• չճանաչված ՈՆԱ-ների արժեքը յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին,

• ընկերության ընդհանուր ՈՆԱ-ների արժեքը յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին,

• չճանաչված և ընդհանուր ՈՆԱ-ների արժեքային փոփոխությունները նախորդող ժամանակահատվածի համար:

Իսկ որակական մասը պետք է ներկայացնի հետևյալ տեղեկությունները՝

• ընկերության ներսում ստեղծվող և արդեն ավարտական փուլում գտնվող ՈՆԱ-ների վրա կատարած համախառն ծախսումները՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք հաջողված են, թե՞ ոչ,

• հաջողված ծախսերի հաշվեկշիռ, որտեղ ներկայացվում են այն ծախսերը, որոնց արդյունքում ստեղծվել է որևէ նոր ոչ նյութական ակտիվ:

ՄՍՕ-ների և ՈՆԱ-ների գնահատման տեսանկյունից վերոհիշյալ հիմնախնդիրները ավելի են կարևորվում, քանզի ոչ նյութական ակտիվների արտացոլումը բաժնետիրական ընկերությունների հաշվեկշիռներում բավականին պարզեցնում է դրանց հետ առնչվող

\* Աղբյուրը՝ Հայաստանի ֆոնդային բորսա, լիստինգային բաժնի հիմնապաշար, 2004 թ. մարտ-ապրիլ:

տնտեսական գործարքները: Ավելի հստակ՝ ցանկացած ՈՆԱ ստեղծվում է որևէ կազմակերպության ներսում, և հետևաբար ճանաչման ու հաշվառման արդյունավետ մոտեցումների մշակումը թույլ կտա հետագայում խուսափել գնահատման հետ կապված բարդություններից, քանզի վերջիններս «արդյունավետ» արժեքով արդեն արտացոլված կլինեն ընկերության հաշվեկշռում:

Մեր կարծիքով, մեծարժեք կորպորատիվ գործարքների մեջ ներգրավված ՄՍՕ-ները և ՈՆԱ-ները պետք է գնահատվեն մասնագիտացված կազմակերպության կողմից, մինչդեռ փոքր գործարքների դեպքում կազմակերպությունները իրենք կարող են ներքին գնահատում իրականացնել<sup>9</sup>:

Գնահատման գործընթացում պետք է հստակ զատել թուր ոչ նյութական ակտիվները, քանզի եկամտային եղանակով գնահատման դեպքում միևնույն դրամական հոսքով կարող է գնահատվել մի քանի ՄՍՕ, որը կհանգեցնի վերջիններիս արժեքի ուճացման: Գնահատման համեմատական մոտեցման դեպքում մենք կարող ենք հայտնվել փակ շղթայում, երբ համանման օբյեկտների վերաբերյալ այլ կազմակերպությունների հաշվետվություններից չենք կարողանում տեղեկություն ստանալ, որովհետև ստանդարտները դեռևս չեն տալիս ընկերությունների հաշվեկշիռներում վերջիններիս արտացոլման հնարավորությունը:

Մտավոր սեփականության օբյեկտները կորպորատիվ գործարքներում հանդես են գալիս ոչ նյութական ակտիվների տեսքով, որոնք օրենսդրորեն ճանաչված են որպես հարկատուի իրավունքի օբյեկտներ:

Ոչ նյութական ակտիվ հասկացությունը տարբեր հեղինակներ մեկնաբանում են տարբեր կերպ: Այսպես, ըստ Լ. Ջ. Շնեյդեմանի, ՈՆԱ ասելով նկատի է առնվում արդյունաբերական և այլ ՄՍՕ-ների պայմանական արժեքը<sup>10</sup>: Վ. Աստախովի մեկնաբանմամբ ոչ նյութական ակտիվների տարբերակիչ հատկանիշներից են նյութական հիմքի բացակայությունը և միաժամանակ սեփականատիրոջը եկամտոտ բերելու հատկությունը, ձեռնարկության նորմալ գործունեության պայմաններում դրանք վաճառելու մտադրության բացակայությունը, արտադրության և սպառման ընթացքում թափոնների բացակայությունը, օգտագործման բազմակողմանիությունը<sup>11</sup>: Վ. Բ. Իվաշկևիչը ոչ նյութական ակտիվները դիտում է որպես ձեռնարկության կողմից ոչ նյութական օբյեկտների մեջ կատարված ծախսումներ, որոնք օգտագործվում են տնտեսավարող սուբյեկտի գործունեության ընթացքում և եկամտի աղբյուր են<sup>12</sup>: Ա. Բ. Բուտնիկ-Սիվերսկին և Ա. Դ. Սվյատոցկին ոչ նյութական ակտիվը սահմանում են որպես երկարաժամկետ իրավունքներ կամ առավելություններ, որոնք արտացոլված են տնտեսավարող սուբյեկտի հաշվեկշռում՝ որպես դրանց ձեռքբերման և եկամտոտ ստանալու վիճակի հասցնելու ծախսեր<sup>13</sup>: Տ. Կառլինը ՈՆԱ-ները համարում է հաշվապահական հաշվեկշռի առավել չարորակ և չուսաբանված հոդված<sup>14</sup>: Ջ. Հարրիսը ՈՆԱ-ն համարում է այն ամենը, ինչը կա ընկերությունում՝ բացի նյութական և դրամական ակտիվներից<sup>15</sup>: Ոչ նյութական ակտիվների նկատմամբ հետաքրքիր մոտեցում ունի Կոբեի Համալսարանի պրոֆեսոր Ի. Շիմիցուն, որը իր աշխատանքում դրանք բնութագրում է որպես ընկերության հասարակ բաժնետոմսերի արժեքային հիմք<sup>16</sup>,

<sup>9</sup> St'u P. Wilson, Discussion about the Possibility of Disclosure of the Fair Value of Intangible Assets, "FASB Board Meeting", September 25, 2002:

<sup>10</sup> St'u Л. Э. Шнейдеман, Учет новых видов имущества и операций, М., 1993:

<sup>11</sup> St'u В. П. Астахов, Нематериальные активы, М., 1996:

<sup>12</sup> St'u В. Б. Ивашкевич, Бухгалтерский учет нематериальных активов, Бухгалтерский учет и финансовый менеджмент, Киев, 1994:

<sup>13</sup> St'u А. Б. Бутник-Сиверский, А. Д. Святоцкий, Интеллектуальная собственность в Украине: правовые основы и практика, в кн.: "Оценка интеллектуальной собственности, бухгалтерский учет и налогообложение", том 4, Киев, 2000, էջ 12:

<sup>14</sup> St'u Т. Р. Карлин, Анализ финансовых отчетов на основе GAAP, М., 1998, էջ 45-46:

<sup>15</sup> St'u J. E. Harris, Valuing Intangible Assets: A primer, Mercer Capital Ltd, London, 2002:

<sup>16</sup> St'u Y. Shimizu, Disclosure of Intangible Assets by US companies in 1895-1914, Kobe University, Japan, 1998, էջ 8:

իսկ արտոնյալ բաժնետոմսերը՝ նյութական ակտիվների արժեքային ցուցանիշ: “Arthur Andersen” ընկերության առաջատար մասնագետներից մեկի՝ Ն. Բերտոլոտիի համոզմամբ ոչ նյութական ակտիվները պետք է բաժանելի լինեն ընկերության բոլոր մնացած ակտիվների<sup>17</sup>:

Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտ 38-ը ոչ նյութական ակտիվը սահմանում է որպես ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվ, որը պահվում է արտադրությունում օգտագործելու, ապրանքներ (արտադրանք) մատակարարելու կամ ծառայություններ մատուցելու, այլ անձանց վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար<sup>18</sup>:

Իհր-ում ոչ նյութական ակտիվներ են համարվում այն իրավունքները, որոնք օգտագործվում են երկար ժամանակամիջոցում (մեկ տարուց ավելի), եկամտի աղբյուր են<sup>19</sup> և առաջանում են՝

- գիտական, գրականության ու արվեստի ստեղծագործությունների վերաբերյալ հեղինակային և այլ տեսակի պայմանագրերից, ինչպես նաև՝ տեղեկատվական հիմնապաշարների և համակարգչային ծրագրերին առնչվող հարակից իրավունքների օբյեկտներից,

- գյուտերի արտոնագրերից, օգտակար մոդելների հավաստագրերից, ապրանքային և սպասարկման նշաններից, ինչպես նաև վերջիններին շուրջ կնքված լիցենզիոն պայմանագրերից,

- նոու-հաուի նկատմամբ ունեցած իրավունքներից:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ ներկայումս ընկերությունների մեծ մասը իր եկամուտները ստանում է մտավոր սեփականության օբյեկտների և ոչ նյութական այլ ակտիվների նկատմամբ ունեցած իրավունքների իրացումից, կարելի է վստահաբար ասել, որ վերջիններին գնահատումը, հաշվառումը և հարկումը մեծապես կարող են ազդել այդ ընկերությունների շահութաբերության վրա:

Մտավոր սեփականության օբյեկտների գնահատման և հարկման գործընթացը կախված է այդ իրավունքների փաթեթի գործունեության հարկային դաշտից: Քանի որ ՄՍՕ-ները համարվում են բավականին շարժունակ (մոբիլ), ապա այս հատկությունից օգտվում են հատկապես վերազգային կորպորացիաները<sup>20</sup> (ՎԱԿ), որոնք իրենց պատկանող ՄՍՕ իրավունքների պորտֆելի համար համաշխարհային տնտեսությունում փրկություն են առավել «մեղմ» հարկային ռեժիմներ: Իրենց հերթին ազգային տնտեսությունները մրցակցում են մտավոր սեփականությանն առնչվող հարկային դաշտի մեղմացման համար<sup>21</sup>, որը բարձրտեխնոլոգիական ընկերություններին թույլ է տալիս ծավալելու ձեռնարկչատիրական գործունեություն՝ նպաստելով տնտեսության որակական աճին:

Անվիճելի է, որ ՄՍՕ-ների հաշվառումը շատ կարևոր է, սակայն չկա համակարծություն, թե ինչպես պետք է դրանք ճանաչվեն, գնահատվեն և հաշվառվեն: Ուստի միևնույն ընկերության հաշվեկշիռը տարբեր հարկային տարածքներում բացարձակապես տարբեր տեսք կարող է ստանալ: Փաստ է, որ ոչ մի հարկային օրենսդրություն թույլ չի տալիս ճանաչել և գնահատել ներստեղծված ոչ նյութական ակտիվները և

<sup>17</sup> St'u N. Bertolotti, *THEME III: Methodologies for determining the value of industrial property assets- Viewpoint of a professional consultant engaged in valuating industrial property assets*, Arthur Andersen, November 1996, WIPO/IP/BJ/96/10, Beijing:

<sup>18</sup> Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտ 38, Սահմանումներ, 7-րդ հոդված, էջ 7:

<sup>19</sup> St'u “Положение о бухгалтерском учете и отчетности в Российской Федерации”, Министерство Финансов РФ, 26/12/1994:

<sup>20</sup> St'u A. Casley, *Introduction to taxation of IP*, Pricewaterhouse Coopers Ltd, London, 2003, [www.pricewaterhousecoopers.com/IP\Introduction to taxation of IP.pdf](http://www.pricewaterhousecoopers.com/IP\Introduction to taxation of IP.pdf):

<sup>21</sup> St'u I. Verlinden, P. Boone, C. Goemaere, *Government, taxation and IP*, PricewaterhouseCoopers Ltd, London, 2003, [www.pricewaterhousecoopers.com/IP\Government, taxation and IP. pdf](http://www.pricewaterhousecoopers.com/IP\Government, taxation and IP. pdf):

արտացոլել հաշվեկշիռում: Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է, եթե փոխում է սեփականատիրոջը, այսինքն՝ դառնում է գործարքի առարկա:

**Աղյուսակ 1**

**ՄՍՕ-ների հարկման համեմատություններ\***

	Մեծ Բրիտանիա	ԱՄՆ	Յոթանիա	Գերմանիա	Ճապոնիա
Հահուրահարկը	30%	40%	35%-42% <sup>1</sup>	38%-40%	42%
Անդրտիգացիան					
Գնված գույքի	ՕՏԺ կամ 25 տարի [SL]	15 տարի [SL]	Չկա	15 տարի [SL]	5 տարի [SL]
Արտոնագիր	ՕՏԺ կամ 25 տարի [SL]	15 տարի [SL] <sup>1</sup> կամ ՕՏԺ <sup>2</sup>	ՕՏԺ (5-20 տարի)	5-8 տարի [SL]	8 տարի [SL]
Ֆիրմային նշան	ՕՏԺ կամ 25 տարի [SL]	15 տարի [SL] <sup>1</sup> կամ ՕՏԺ <sup>2</sup>	Չկա	5-8 տարի [SL]	10 տարի [SL]
Համակարգչային ծրագիր	ՕՏԺ կամ 25 տարի [SL]	15 տարի [SL] <sup>1</sup> կամ ՕՏԺ <sup>2</sup>	ՕՏԺ կամ 12 ամիս	5-8 տարի [SL]	3 կամ 5 տարի [SL]
Հահուրահարկը	Իռլանդիա	Շվեյցարիա	Նիդեռլանդներ	Իսպանիա	Ավստրալիա
Անդրտիգացիան	12,5%-25%	15%-29%	35%	35%	30%
Գնված գույքի	Չկա	5 տարի [SL] կամ 40% [RB]	ՕՏԺ	20 տարի [SL]	Չկա
Արտոնագիր	ՕՏԺ <sup>2</sup> կամ 17տարի [SL]	Նույնը	ՕՏԺ	ՕՏԺ (առավելագույնը 10 տարի [SL])	6-20 տարի [SL]
Ֆիրմային նշան	Չկա	Նույնը	ՕՏԺ	ՕՏԺ (առավելագույնը 10 տարի [SL])	Չկա
Համակարգչային ծրագիր	5 տարի [SL]	Նույնը	ՕՏԺ	Առավելագույնը 3տարի	2.5 տարի [SL]
[SL] = ամբողջացվածի գծային մեթոդ; [RB] = ամբողջացվածի նվազող մնացորդի մեթոդ					
Օգտակար ծառայության ժամկետ - ՕՏԺ					
Լչումներ					
<sup>1</sup> Երբ ակտիվը ձեռք է բերվել որպես բիզնեսի մաս					
<sup>2</sup> Երբ արտոնագրի գործողության ժամկետը 17 տարուց քիչ է					
<sup>3</sup> Որոշակի պայմանների առկայության դեպքում արտոնագրերից և արտոնագրերի այլ գյուտերից ստացված եկամուտը ենթակա է ավելի բարձր (ներկայումս այն 20.19%) եկամտահարկի կիրառմանը					

ՈՆԱ-ն կարող է ճանաչվել և հաշվառվել գնահատման հետևյալ սկզբունքներով՝

- փաստացի ինքնարժեքի, այսինքն՝ ձեռքբերման սկզբնական արժեքի գնով,
- ընթացիկ վերականգման արժեքով,
- ընթացիկ շուկայական գնով,
- իրացման գուտ արժեքով:

Ոչ նյութական ակտիվների ճանաչումը, գնահատումը և հաշվառումը սկիզբ դրվեց 1970 թվականին ԱՄՆ-ում APB 16 ստանդարտով<sup>22</sup>, որը թույլ էր տալիս առանձնացվելի ՈՆԱ-ները ճանաչել, գնահատել և հաշվառել, ընդ որում ամբողջացիոն ժամկետը չպետք է գերազանցեր 40 տարին: Հաջորդ քայլը IAS 22 միջազգային ստանդարտի ընդունումն էր 1983 թվականին, որին հաջորդեց 1994-ին Անգլիայի հաշվապահական հաշվառման ստանդարտների խորհրդի ներկայացրած FRS 7 ստանդարտը. այն հնարավորություն էր տալիս գնահատել ակտիվները իրենց շուկայական գներով, սակայն չէր ներառում ՈՆԱ-ները: Այս բացը լրացվեց 1997-ին, երբ մշակվեց FRS 10-ը, որով հնարավորություն ստեղծվեց ճանաչել և հաշվառել ՈՆԱ-ն դրա արժեքի ճշգրիտ որոշման դեպքում:

2001 թվականին FASB-ը ներկայացրեց երկու նոր ստանդարտներ՝ 141<sup>23</sup> և 142<sup>24</sup>, որոնք սահմանում էին ակտիվների ձեռքբերման և հետագա հաշվառման կարգը գործարար (կորպորատիվ) միաձուլումների և միավորումների ժամանակ: SFAS 141 ստանդարտով առաջարկվում է ՈՆԱ ճանաչման անհրաժեշտ պայման համարել ընկերությունից դրանց առանձնացնելիության հնարավորությունը կամ օգտագործումը պայմանագրային

\* Աղբյուրը՝ A. Gregory, B. Boshoff, International taxation of IP and Goodwill, Pricewaterhouse Coopers Ltd, London, 2003, [www.pricewaterhousecoopers.com\IP\Intarenational taxation of IP and Goodwill.pdf](http://www.pricewaterhousecoopers.com\IP\Intarenational taxation of IP and Goodwill.pdf):

<sup>22</sup> Տե՛ս C. Woodward, Accounting for Intellectual Property, Pricewaterhouse Coopers Ltd, London, 2003, էջ 2, [www.pricewaterhousecoopers.com\IP\ Accounting for Intellectual Property.pdf](http://www.pricewaterhousecoopers.com\IP\ Accounting for Intellectual Property.pdf):

<sup>23</sup> Տե՛ս FASB Statement 141, Business Combinations, Issue date June 2001:

<sup>24</sup> Տե՛ս FASB Statement 142, Goodwill and Other Intangible Assets, Issue date June 2001:

հարաբերությունն ենք հիման վրա: SFAS 142-ի համաձայն՝ գուղվիլը չունի օգտակար գործողության ժամկետ, հետևաբար այն չի կարող ամորտիզացվել, քանզի յուրաքանչյուր տարին մեկ ենթակա է վերագնահատման, եթե օբյեկտիվ պատճառներ կան կարծելու, որ վերջինս արժեքը փոխվել է: ԱՄՆ հաշվապահական ստանդարտները առավել համապարփակ են նաև ժամանակակից ՈՆԱ-ների ճանաչման, գնահատման և հաշվառման տեսանկյունից: Ընդ որում, ներկայումս Եվրամիության երկրները աշխատանքներ են տանում 2005 թվականին «Միջազգային հաշվապահական ստանդարտներին» անցնելու, որոնք մտավոր սեփականության և այլ ոչ նյութական ակտիվների գնահատման տեսանկյունից բավականին համապատասխանում են SFAS ստանդարտներին<sup>25</sup>:

Իսկ որո՞նք են US GAAP և IAS ստանդարտների միջև եղած տարբերությունները ոչ նյութական ակտիվների առումով.

- IAS-ը ճանաչում, գնահատում և հաշվառում է այն ՈՆԱ-ն, որի նկատմամբ կազմակերպությունը ունի պայմանագրային իրավունքներ, իսկ US GAAP-ը՝ նաև այն ՈՆԱ-ները, որոնց նկատմամբ ընկերությունը ունի միայն տնտեսական իրավունք: Հետևաբար՝ US GAAP-ի համաձայն կազմված հաշվեկշիռը կունենա շատ ճանաչված ՈՆԱ-ներ և փոքր գուղվիլ, քան IAS-ինը,

- US GAAP-ը պահանջում է անավարտ գիտահետազոտական աշխատանքների ձեռքբերումը վերագրել ծախսերին, իսկ IAS-ը՝ վերագրել ակտիվներին և ամորտիզացնել,

- IAS-ը ամորտիզացնում է գուղվիլը 20 տարիների ընթացքում, իսկ US GAAP-ը՝ ոչ:

2001 թ. հուլիսին FASB-ի ընդունած երկու ստանդարտները<sup>26</sup> մեծ ազդեցություն ունեցան մտավոր սեփականության և ոչ նյութական ակտիվների գնահատման վրա: Ըստ FASB-ի ստանդարտների՝ եթե գյուտը ստեղծվում է կազմակերպության ներսում, ապա դրա արտոնագրի գնահատման միակ մոտեցումը վերջինս ստեղծման համար անհրաժեշտ ԳՀՓԿՏ աշխատանքների հանրագումարի հաշվարկումն է: Համանման մոտեցում է կիրառվում նաև հեղինակային իրավունքի գնահատման ընթացքում: Ինչ վերաբերում է ապրանքային նշանի գնահատմանը, ապա FASB-ը հստակ ցուցումներ չի տալիս, այլ հաստատում է, որ վերջիններս կարող են շատ արժեքավոր լինել՝ բերելով «Կոկա Կոլա» ընկերության օրինակը, որի ապրանքային նշանը 2001 թվականին գնահատված էր 43 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ընկերության նույն տարվա հաշվեկշռում ՈՆԱ հոդվածի գումարային մեծությունը կազմում էր ընդամենը 2.6 մլրդ ԱՄՆ դոլար:

Այսպիսով ակնհայտ է, որ մտավոր սեփականության օբյեկտների և ոչ նյութական այլ ակտիվների ճանաչման, գնահատման և հաշվառման հիմնախնդիրները հատկանշական չեն միայն անցումային տնտեսությունների համար: Համանման դժվարությունների են հանդիպում նաև զարգացած արևմտյան տնտեսությունները, որոնք, սակայն, ունենալով զարգացած օրենսդրական դաշտ և ենթակառուցվածքներ, անհամեմատ հեշտ ու ոչ ցավագին են հաղթահարում նշյալ խնդիրները:

Քանի որ կորպորատիվ գործարքների ՀՀ շուկան դեռևս գտնվում է կայացման փուլում, ուստի ինքնին հասկանալի է, որ մտավոր սեփականությանը վերաբերող հիմնահարցերն անսովոր են տնտեսավարող օբյեկտների համար: Մասնավորապես «Գնահատման մասին» ՀՀ օրենքի, «Գնահատման ստանդարտների» և հարակից նորմատիվային այլ ակտերի բացակայության դեպքում գրեթե անհնար է դառնում վերջիններիս գնահատման օրենսդրական մեխանիզմների ներկայացումը:

Իսկ վերոհիշյալ դաշտի թերզարգացածության պատճառով տուժում են թե՛ մասնավոր հատվածը և թե՛ պետությունը, քանզի վերջինս զրկվում է նաև հարկային եկամուտներից, որոնք կարող էին առաջանալ մտավոր սեփականության օբյեկտների և ոչ նյութական այլ ակտիվների աշխույժ շուկայի առկայության պայմաններում: Արևմտյան զարգացած տնտեսությունների փորձը մտավոր սեփականության գնահատման ոլորտում անհրաժեշտ է նկատի ունենալ ազգային օրենսդրական դաշտի մշակման ընթացքում,

<sup>25</sup> St'u P. Gosling, *The Value of Intellectual Property, Intangible Assets and Goodwill*, Sunday Times, 2003:

<sup>26</sup> St'u FASB, *Business Combinations*, SFAS No. 141, *Goodwill and Other Intangible Assets*, SFAS № 142 (Norwalk, Conn., FASB, 2001):



ընդ որում «Գնահատման ստանդարտների» ընդունումը, մեր կարծիքով, առաջնահերթ քայլ է այդ ուղղությամբ: Մտավոր սեփականության՝ ՀՀ շուկայի հետագա զարգացման միտումներից ելնելով՝ պետք է փոփոխություններ կատարել նաև օտարերկրյա ներդրումների, ՀՀ հաշվապահական ստանդարտների, մաքսային, հարկային և խնդրո առարկա ու լրրոտին ուղեկցող այլ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում:

Մտավոր սեփականության գնահատման հետ կապված հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կարևոր քայլ կլինի նաև ՀՀ-ում ֆոնդային շուկայի կայացումը, որի շնորհիվ բաժնետիրական ընկերությունների ակտիվները կգնահատվեն շուկայական արժեքներով և էականորեն կհեշտացնեն ոչ գյուղական ակտիվների երկրորդական շուկայի զարգացումը:

**А. Ф. МОСИКЯН - К вопросу об оценке интеллектуальной собственности в корпоративных сделках.** - Глобализация, высокие технологии и электронный бизнес представили новые модели экономических систем, где информация, интеллектуальная собственность и знание являются основными активами, которые обеспечивают конкурентные преимущества национальных экономик.

Интеллектуальная собственность - это самый ценный актив для копропации, она и обеспечивает основную часть прибыли. В свою очередь процессы идентификации, оценки и учета интеллектуальной собственности и других нематериальных активов оказывают значительное влияние на рентабельность транснациональных компаний (ТНК).

Так как интеллектуальная собственность и другие нематериальные активы очень мобильны, то руководство ТНК с легкостью может перевести эти активы в те страны, где национальная учетная, оценочная и налоговая системы более благоприятны.

В данной статье сделана попытка анализа нынешней ситуации в мировой экономике и выработки некоторых рекомендаций для наиболее плавного перехода к более эффективной системе идентификации, учета и оценки интеллектуальной собственности.